ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Տիգրանյան Սեդա Տիգրանի

«ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ 13-14-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ԻԲՆ ԹԱՅՄԻԱՅԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ)»

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

(մասնագիտություն՝ Է.00.02 «Համաշխարհային պատմություն»)

Սեդա Տիգրանի Տիգրանյանի՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված «Իսլամական պետության եվ հասարակության զարգացման տեսլականը 13-14-րդ դարերի աշխարհաքաղաքական կերպափոխումների համատեքստում (Իբն Թայմիայի տեսանկյունից)» ատենախոսությունը նվիրված է Աբբասյան խալիֆայության փլուզման և իսլամական համայնքի թուլանալու պատճառների վերաբերյալ Իբն Թայմիայի մոտեցումների, պատմության ուսումնասիրվող շրջանում իսլամական աշխարհում առաջացած մարտահրավերները հաղթահարելու ուղիների և հասարակության սոցիալ-քաղաքական կազմակերպման սկզբունքների համակողմանի ուսումնասիրությանը:

Թեմայի ուսումնասիրումը կարևոր է տվյալ ժամանակահատվածում իսլամական հասարակության ներսում տեղի ունեցող պատմական, քաղաքական, մշակութային-քաղաքակրթական գործընթացները խորքային կերպով պարզաբանելու առումով: Ատենախոսությունը, ըստ էության, ուսումնասիրության նոր դիտանկյուն է և հնարավորություն է տալիս բացատրելու իսլամական հասարակության զարգացման ընթացքին առնչվող իրողությունները ինչպես ուսումնասիրվող ժամանակաշրջանում այնպես էլ հետագա դարերում:

Իբն Թայմիան, լինելով իր ժամանակաշրջանի ամբողջ սուննիական կրոնաիրավական համակարգի ամենահեղինակավոր անձնավորությունը, ցայսօր ունի մեծ

հեղինակություն և կարևորություն: Նրա թողած ժառանգությունը դարձել է իսլամական արմատականության ժամանակակից միտումների ձևավորման կարևոր հիմքերից մեկը, ուստի թեման կարևոր է նաև չափավոր և ծայրահեղական արմատական խմբավորումների գործունեությանն առնչվող իրողությունները ուսումնասիրելու և պարզաբանելու առումով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլխում ներկայացվում են 1258 թ. Բաղդադի անկումը և Աբբասյան խալիֆայության՝ շուրջ հինգ դար տևած պատմության ավարտը, Մամլուքյան սուլթանության ու Մոնղոլական Իլխանության հակամարտությունը, դրա համատեքստում Իբն Թայմիայի գործունեությունը, տեսական և գործնական պայքարը մոնղոլների դեմ:

Երկրորդ գլխում հետազոտվում և վերլուծվում է իսլամի մաքրությանը սպառնացող նորարարությունների դեմ պայքարը, որը Իբն Թայմիան հասցեագրում է ինչպես քրիստոնյաներին, այնպես էլ իսլամի տարբեր ճյուղերին և ուղղություններին: Այս վերլուծությունը կարևոր է 13-14-րդ դարերում իսլամական աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները պայմանավորող ներքին գործոնները լիարժեք լուսաբանելու տեսանկյունից:

Ատենախոսության երրորդ գլխում պատմական համատեքստում համակողմանիորեն ուսումնասիրվում և վերլուծվում է իսլամական պետության և հասարակության զարգացման, սոցիալ-քաղաքական կազմակերպման՝ Իբն Թայմիայի տեսությունը՝ զուգահեռաբար անդրադարձ կատարելով կարևոր դրույթները կիրառելու հետագա փորձերին: Ուսումնասիրվում և համապարփակ կերպով ներկայացվում են հակասական եզրահանգումների առարկա դարձած սկզբունքային նշանակություն ունեցող մի շարք դրույթներ, որոնց լիարժեք պարզաբանումը և հստակեցումը հնարավոր է միայն պատմական դիտանկյունից հետազոտելով, որն էլ, ըստ էության, արել է ատենախոսը:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը սույն ատենախոսության առավել կարևոր և թերևս ամենաբեկման կողմերից է. հեղինակին հաջողվել է օգտագործել տարաբնույթ սկզբնաղբյուրներ արաբերենով, մասնավորապես՝ Իբն Թայմիայի աշխատությունները, ինչպես նաև հայերեն, անգլերեն և ռուսերեն գիտական արժեքավոր հետազոտությունները, որոնք հնարավորություն են տվել հեղինակին համակարգված և ծավալուն հետազոտություն իրականացնել:

Ինչպես իրավացիորեն նշում է ատենախոսը՝ 13–14-րդ դարերի աշխարհաքաղաքական փոխակերպումների խորապատկերում՝ 1258 թ. Բաղդադի անկումը և Աբբասյան խալիֆայության՝ շուրջ հինգ դար տևած պատմության ավարտը, Մամլուքյան սուլթանության ու Մոնղոլական Իլխանության հակամարտությունը՝ իսլամական պետության և հասարակության զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունը դարձնում է անչափ կարևոր է:

Հեղինակը հետազոտության ուսումնասիրվող ժամանակաշրջանը արդարացիորեն համարում է իսլամական քաղաքակրթության պատմության առավել բարդ և բեկումնային փուլերից մեկը, երբ լայնածավալ ռազմաքաղաքական, հասարակական և մշակութային փոփոխությունների ազդեցությամբ պայմանավորված վերաիմաստավորվում էին պետական կառավարման, հասարակական զարգացման, ինչպես նաև իշխանության կրոնաքաղաքական լեգիտիմության հիմնարար սկզբունքները: Այդ իրողությունները ամբողջապես հասկանալու համար, մասնավորապես՝ Իբն Թայմիայի հայացքների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առավել հիմնավոր ընկալելու տվյալ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական գործընթացների առանձնահատկությունները և բացահայտելու իսլամական քաղաքական-իրավական մտքի ձևավորման հիմնական օրինաչափությունները:

Համաձայն եմ հեղինակի նաև այն մտքի հետ, որ Իբն Թայմիայի գաղափարները մինչ օրս շարունակում են զգալի ազդեցություն ունենալ իսլամական հասարակական-քաղաքական մտքի վրա: Դրանց գիտական համակողմանի վերլուծությունն էական նշանակություն ունի ոչ միայն պատմագիտության, իսլամագիտության և

կրոնագիտության, այլև քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների և տարածաշրջանային անվտանգության արդի ուսումնասիրությունների համար: Համաշխարհային քաղաքականության մեջ կրոնական գործոնի այսպես ասած ալիքաձև ընթացքի պայմաններում իսլամական պետականաքաղաքական հայեցակարգի ձևավորման ակունքներին անդրադարձը նպաստում է Մերձավոր Արևելքում և ընդհանրապես իսլամական աշխարհում ընթացող ժամանակակից գործընթացների առավել խորքային և համարժեք ըմբռնմանը:

Ատենախոսության արժանիքներից է հեղինակի կողմից կատարված նախանձախնդիր հետազոտական ծավալուն աշխատանքն է, որտեղ զետեղված օտարալեզու սկզբնաղբյուրների և այլ արժեքավոր հետազոտությունների համակողմանի ուսումնասիրությունների վերջնաարդյունքները փաստում են գիտական հանրությանը արժեքավոր աշխատանք ներկայացնելու մասին: Պատմական տվյալ ժամանակահատվածի կարևորագույն իրադարձությունների համեմատական վերլուծությունը հիմք է հանդիսացել հեղինակի կողմից գիտական եզրահանգումներ անելու համար: Վերոնշյալը թույլ է տալիս արձանագրել, որ Սեդա Տիգրանյանը ունի ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելու համապատասխան կարողություններ:

Ինչպես ցանկացած աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշ թերություններից, որոնցից կցանկանայի նշել մի քանիսը.

- Աշխատանքում հանդիպում են վրիպակներ և խրթին ձևակերպումներ: Ցանկալի կլիներ օգտագործված գրականության ցանկում արաբալեզու աղբյուրները ներկայացնել լատինատառ տառադարձմամբ, որպեսզի արաբերեն չտիրապետող ընթերցողի համար դրանք ևս հասկանալի լինեին:
- Փաստացիորեն, Իբն Թայմիայի հայացքները ձևավորվել են որպես գաղափարական արձագանք 13–14-րդ դարերի իսլամական աշխարհի խորքային ճգնաժամերին, որոնց պայմաններում, ի թիվս այլ համակարգային վերափոխումների, փլուզվեց նաև ժամանակի ավանդական միջազգային հարաբերությունների կառուցակարգը: Այդ համատեքստում

նպատակահարմար կլիներ, որ հեղինակը ատենախոսության առաջին գլխում, Աբբասյան խալիֆայության անկման և մոնղոլական նվաճումների ներազդեցության համատեքստում, առավել հանգամանորեն անդրադառնար տարածաշրջանի ռազմաքաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխություններին: Վերջիններիս համակողմանի վերլուծությունը հնարավորություն կտար առավել ամբողջական կերպով ներկայացնել այն պատմաքաղաքական միջավայրը, որը, ըստ էության, պայմանավորեց Ումմայի վերածննդին միտված գաղափարական նոր հայեցակարգերի և գործիքակազմերի ձևավորումն ու վերաիմաստավորումը: Աշխարհաքաղաքական այս կերպափոխումների առավել լայն լուսաբանումը գիտականորեն հիմնավորված է նաև այն առումով, որ հենց այդ գործընթացների համատեքստում են ձևավորվում իսլամական հասարակական համերաշխության ամրապնդման և իսլամական պետականության վերակազմավորման գաղափարական ու քաղաքական հրամայականները:

- Կարծում ենք, որ աշխատանքը զգալիորեն կշահեր, եթե հեղինակն ատենախոսության երրորդ գլխում առանձին ենթավերնագրի շրջանակում ներկայացներ Իբն Թայմիայի քաղաքական մտքի համեմատական վերլուծությունը Ալ Ղազալիի, Ալ Մաուարդիի և, ժամանակագրական առումով, ավելի ուշ շրջանի մտածող Իբն Խալդունի գաղափարական մոտեցումների համատեքստում: Նման համեմատական քննությունը հնարավորություն կտար առավել խորությամբ բացահայտել Իբն Թայմիայի քաղաքական հայեցակարգի առանձնահատկություններն ու ինքնատիպությունը, ինչպես նաև առավել հստակ սահմանել նրա տեղն ու նշանակությունը դասական իսլամական քաղաքական մտքի զարգացման ընթացքի մեջ: Միաժամանակ, նման համեմատական դիտարկումը հնարավորություն կընձեռեր ցույց տալու, որ իսլամական քաղաքական միտքն ունի զարգացման ինքնուրույն տրամաբանություն և հայեցակարգային հիմքեր, որոնք էապես տարբերվում են ասենք արևմտյան քաղաքական մտքի էվոլյուցիոն մոդելից՝ պայմանավորված վերջիններիս տարբեր քաղաքակրթական, կրոնական և պատմաքաղաքական նախադրյալներով: Արդյունքում, Իբն Թայմիայի քաղաքական հայացքների վերլուծությունը ոչ միայն կստանար առավել ամբողջական տեսական

հիմնավորում, այլև կհստակեցվեր դրանց տեղն ու ազդեցությունը իսլամական քաղաքական-իրավական մտքի զարգացման համատեքստում:

Այսուհանդերձ, նշված դիտարկումները բնավ չեն նվազեցնում հետազոտության գիտական արժեքը: Սեդա Տիգրանի Տիգրանյանի՝ «Իսլամական պետության եվ հասարակության զարգացման տեսլականը 13-14-րդ դարերի աշխարհաքաղաքական կերպափոխումների համատեքստում (Իբն Թայմիայի տեսանկյունից)» ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳ կոմիտեի՝ Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակը արժանի է հայցվող պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

պ.գ.թ., դոցենտ Գևորգյան Գոռ Գևորգի

(մասնագետի պաշտոնը, գիտական աստիճանը) (ստորագրություն)

Մասնագետի ստորագրության իսկությունը

(ա. ա. հ.)

հաստատում եմ.

(կազմակերպության գիտ. քարտուղար) *(ստորագրություն և կնիք)*

Հայաստանի Ազգային Գրադարանի Ինստիտուտ
Восточный Институт Национальной академии наук РА
Oriental Studies of National Academy of Sciences of the RA
Institut of SNCO * ԻՆՍՏԻՏՈՒՏ * ՀՀ ԳԱԱ ԱԳԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
00009554